# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հուլիսի 2024 թվականի N 2722-Ա**

### <<ՌԱՖ-ԱՎՈ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի, 41-րդ, 42-րդ կետերի պահանջներով հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀԱՄԱՇՏ-ԲՄԾՁԲ-24/3 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ԲՄ ընթացակարգի մասնակից «ՌԱՖ-ԱՎՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել հայտում տեղ գտած անհամապատասխանության շտկումը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը Ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ «ՌԱՖ-ԱՎՈ» սահմանափակ պատասխանատվութամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար /կցվում են տվյալները/:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում և կարգով:

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ՍԱՖԱՐՅԱՆ**

**2024թ. հուլիսի 26**
**ք.Աշտարակ**

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| <<ՌԱՖ-ԱՎՈ>> ՍՊԸ | 08417089 | ՀՀ ք. Գավառ Արծրունի եղբ.85 | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | | | 26 հուլիսի 2024թ. N 2722-Ա<br><br>ՀՀԱՄԱՇՏ-ԲՄԾՁԲ-24/3 |